Հավելված
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2025 թվականի N -Լ որոշման

Հավելված N 1
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2019 թվականի «06» նայեմբերի N 14-Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության ոլորտում հանրությունից, ստացվող դիմում-բողոքների (այսուհետ՝ դիմում) ընդունման և դրանց հետագա ընթացք տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) Հանրություն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր.

2) Դիմումների առձեռն ներկայացում՝ դիմումների ներկայացում Տեսչական մարմնի փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու ստորաբաժանում, ինչպես նաև Տեսչական մարմնի տարածքային կենտրոններ՝ համապատասխան աշխատողին հանձնելու միջոցով.

3) Տեսչական մարմնի էլեկտրոնային փոստ՝ Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատված և Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված էլեկտրոնային փոստ:

II. ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3. Տեսչական մարմինը հանրությունից ընդունում և քննության է առնում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված դիմումները:

4. Դիմումները կարող են ներկայացվել.

1) առձեռն,

2) փոստով,

3) էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստով կամ պաշտոնական կայքէջում առցանց դիմում լրացնելով):

5. Դիմումը կարող է փոխանցվել նաև այլ պետական մարմիններից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

6. Դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը,

2) դիմողի հասցեն, (իրավաբանական անձի գտնվելու վայրը),

3) դիմողի հետադարձ կապի միջոցը (էլեկտրոնային փոստ կամ հեռախոսահամար),

4) մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը,

5) ներկայացվող պահանջը (բողոքի առարկա),

6) կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են),

7) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,

8) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը,

9) ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

10) քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին վնաս հասցնելու վտանգի մասին,

11) քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին վնաս հասցնելու մասին:

7. Տեսչական մարմնում կազմակերպվող անձանց ընդունելության ժամանակ սահմանված կարգով կարող է կազմվել արձանագրություն՝ սույն կարգի 6-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, ինչպես նաև 10-րդ կամ 11-րդ կետերի նշմամբ, որը սույն կարգի 6-րդ կետի իմաստով, համարվում է անձի կողմից ներկայացված դիմում:

8. Դիմումի ներկայացման համար պետական կամ տեղական տուրք չի գանձվում:

9. Անանուն և կեղծ դիմումներին ընթացք չի տրվում:

10. Սույն կարգի 6-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը չներկայացնելը հիմք չէ դիմումն անհետևանք թողնելու համար: Տեսչական մարմինը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դիմողի հասցեն կամ հետադարձ կապի միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը դիմողից ստանալու ուղղությամբ՝ Տեսչական մարմնի արագ գործելու պարտականությունը ապահովելու նպատակով:

11. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ կամ բացթողումներ, որոնք կարող են շտկվել, ապա Տեսչական մարմինը 1 աշխատանքային օրվա ժամկետում դրանք մատնացույց է անում դիմում բերող անձին՝ նրան հնարավորություն ընձեռելով եռօրյա ժամկետում շտկելու այդ սխալները կամ բացթողումները:

12. Սույն կարգի 6-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը չներկայացնելը հիմք չէ դիմումն անհետևանք թողնելու համար: Տեսչական մարմինը պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձը հաստատող փաստաթղթի տվյալները դիմողից ստանալու ուղղությամբ՝ դիմումի հավաստիությունը պարզելու նպատակով:

13. Այն դիմումները, որոնցով հնարավոր չէ ճշտել սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկատվությունը, այդ թվում՝ սույն կարգի 6-րդ կետի 10-րդ կամ 11-րդ ենթակետերով նախատեսված փաստերի մասին տեղեկատվությունը չպարունակող դիմումները ստուգում անցկացնելու հիմք չեն կարող լինել:

14. Դիմումներն ուսումնասիրվում են ըստ դրանց բովանդակության: Դիմումի հիման վրա անցկացվող ստուգումների ընթացքում պարզաբանվում են միայն այն հարցերը, որոնք հիմք են հանդիսացել այդ ստուգումներն իրականացնելու համար, բացառությամբ սույն կարգի 17-րդ կետով նախատեսված դեպքի:

15. Եթե դիմումով ներկայացվող հարցը չի մտնում Տեսչական մարմնի իրավասությունների շրջանակի մեջ կամ ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են այլ վարչական մարմնի իրավասությանը, ապա դրան ընթացք է տրվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

16. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված դիմումի հիման վրա տեսչական մարմնի ղեկավարը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ նաև՝ Օրենք) համապատասխան հրապարակում է

հրաման կամ հանձնարարագիր ստուգում իրականացնելու մասին (այսուհետ՝ Հանձնարարագիր): Հանձնարարագիրը հրապարակվում է սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը Տեսչական մարմին մուտքագրելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Այն դեպքում, երբ դիմումով բարձրացվող հարցը կամ հարցերից մեկը պարունակում է տվյալ տնտեսավարողի կողմից օրենսդրության խախտման մասին վկայող տեղեկատվություն, որն իր մեջ ներառում է անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի, ֆիզիկական անձանց օրինական շահերին վնաս հասցնելու բարձր աստիճանի վերաբերյալ տեղեկատվություն կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են 3 և ավելի դիմում, ապա իրականացվող ստուգման ընթացքում կարող է պարզաբանվել տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավական ակտերի պահպանված լինելը ամբողջ ծավալով:

18. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության հետ կապված դիմումի հիման վրա իրականացված ստուգման արդյուքները վերլուծվում են Տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության կողմից՝ տնտեսավարող սույբեկտների անհատական ռիսկերը գնահատելու, ինչպես նաև՝ տնտեսավարող սույբեկտների ռիսկանության աստիճանը որոշելու նպատակով:

III. ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԸ

19. Հանրությունից ստացված դիմումի ընթացքն ապահովելու համար Տեսչական մարմնում ուսումնասիրվում է դիմումի բովանդակությունը և, այն Տեսչական մարմնի իրավասության մեջ լինելու դեպքում, հրապարակվում է Հանձնարարագրի նախագիծ, որում ներառվում են բացառապես այն հարցերը, որոնց վերաբերյալ դիմումով բարձրացված են (ներառյալ մատնանշված կոնկրետ անձանց վերաբերող), բացառությամբ սույն կարգի 17-րդ կետով նախատեսված դեպքերի:

20. Ստուգում իրականացնելու մասին դիմումատուին տեղեկացվում է Հանձնարարագիրը հրապարակելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

21. Ստուգումներն իրականացվում են Օրենքով սահմանված ընթացակարգով:

22. Այն դեպքում, երբ բարձրացված հարցի վերաբերյալ հաստատված չէ ստուգաթերթ, ապա դիմումին ընթացք է տրվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

23. Հանրությունից ստացված այն դիմումները, որոնք վերաբերում են քաղաքացիներին՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների վերաբերյալ, Տեսչական մարմնի կողմից քննվում են համաձայն սույն կարգի: